

Արձանագրություն թիվ 6

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2022թ ապրիլի 27-ին

Օրակարգում`

1. Ֆակուլտետի ՈւԽ նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների վերաբերյալ:
2. Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2021-22 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
3. Հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
4. Ընթացիկ հարցեր

Նիստի նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյան, - Հարգելի գործընկերներ գիտխորհրդի 16 անդամներից ներկա են 14 անդամ: Օրակարգում պետք է կատարենք 2 փոփոխություն`

1. Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի բացակայությունը հարգելի է, նա կներկայացնի 2021-22 ուս. տարում ամբիոնում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը հաջորդ նիստի ժամանակ: Այսօրվա օրակարգում կատարելու ենք փոփոխություն` 2021-22 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնելու ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Շ.Ա.Մարգարյանը:

2. Հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկումը տեղափոխենք հունիս ամսվա գիտխորհուրդ:

Դնենք քվեարկության փոփոխված օրակարգը և անցնենք աշխատանքի:

-Քիմիայի ֆակուլտետի դեկան Տ.Վ.Ղուչիկյան- Ըստ օրակարգի 1-ին կետի, պետք է լսենք Ֆակուլտետի ՈւԽ նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների վերաբերյալ:

- Քիմիայի ֆակուլտետի ՈւԽ- նախագահ,Արթուր Նիգարյան- (Ելույթը ամբողջությամբ կցվում է)

Ելույթ ունեցողին հարցեր ուղղեցին`

ա/ Ռ.Պ.Մխիթարյան – ինչպես էք որոշում ակտիվ անդամների թիվը;

Ա.Նիգարյանը-Ըստ ՈւԽ-ի կանոնակարգի քիմիայի ֆակուլտետի ՈւԽ իսկական անդամների թիվը 4-ն է (անդամների թվի հաշվարկը կատարվում է ֆակուլտետի ուսանողների թվի հարաբերությամբ): ՈւԽ աշխատանքներին մասնակցելու համար ուսանողը ինքն է դիմում ներկայացնում, սկզբում դրվում է քննարկման, ապա կախված կատարած աշխատանքի որակի և արդիականության` վերոհիշյալ անդամը դառնում է ակտիվ անդամ:

բ/ Ա.Ս.Գալստյան- ՈւԽ-ի կազմակերպած շատ միջոցառումներ տեղի են ունենում դասերի ժամանակ, որը խանգարում է դասապրոցեսին: Ինչու միջոցառումները չեք կազմակերպում դասերից հետո:

Ա.Նիգարյան- Գործարաններ այցելելու և տեխնոլոգիկական գործընթացին մասնակցելու համար անհրաժեշտ էր շուտ գնալ և գրեթե ամբողջ օրը անցկանել գործարանում:

Տ.Վ.Ղոչիկյան – Խոսքը մասնագիտական միջոցառումների մասին չէ, այլ սպորտային և ժամանցային ծրագրերի մասին է: Երբ մրցումը անցկացնում եք դասերի ընթացքում, բացի հիմնական կազմից, այդ ծրագրին մասնակցում են նաև մյուս ուսանողները և խաթարում են դասապրոցեսին: Օրինակ` սպորտային մրցույթի ժամանակ կուրսից մի քանիսը մասնակից էին , իսկ մնացածը գնացել էին դիտորդի կարգավիճակով, հետևաբար ամբողջ կուրսը չէր մասնակցել ռուսաց լեզվի դասին:

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը ընդունեց ՈւԽ նախագահի հաղորդումը, հույս հայտնելով, որ ՈւԽ-ն սպորտային, մշակութային միջոցառումները այսուհետև կկազմակերպվեն դասերից հետո:

2. Տ.Վ.Ղոչիկյան – Այժմ լսենք ֆիզիկական և կուլտիդ քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Շ.Ա.Մարգարյանը.(Հակիրճ ելույթը ներկայացվում է, հիմնական` կցվում):

Շ.Ա.Մարգարյան – 2021-2022թթ Ամբիոնում պաշտպանվել է 3 մագիստրոսական թեզ: Պաշտպանվելու են 4 ավարտական աշխատանքներ: Բացի գիտական լաբորատորիաներից ամբիոնում իրականացվում է 2 թեմատիկ դրամաշնորհ և 1 ԵՊՀ ներքին դրամաշնորհ: Ամբիոնում կատարվում են թվով 4 ՈւԳԸ աշխատանքներ:

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը ընդունեց ֆիզիկական և կուլտիդ քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Շ.Ա.Մարգարյանի հաշվետվությունը կատարված աշխատանքների վերաբերյալ:

Նիստի նախագահ,

քիմիայի ֆակուլտետի ղեկան

Պրոֆեսոր

Նիստի քարտուղար, դոցենտ

Տ.Վ.Ղոչիկյան

Մ.Ա.Սամվելյան

ԵՊՀ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ՈՒԽ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ

1.1 Անվանում՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ՈՒԽ

1.2 Հաշվետու շրջան՝ 25.05.2021-27.04.2022

2. 1 Անդամների թիվ՝ 5

2. 2 Պատվիրակների թիվ՝ 5

2.3 Ակտիվ անդամների թիվ՝ 49

2.4 Հաշվետու շրջանում ակտիվ անդամների համալրման թիվ՝ 19

2. 5 Հաշվետու շրջանում իրականացված միջոցառումների թիվ.

- 1-ին կիսամյակ (իրականացված)՝ 23,
- 2-րդ կիսամյակ (իրականացված)՝ 25,
- 2-րդ կիսամյակ (նախատեսված)՝ 14

2. 5 Հաշվետու շրջանում իրականացված միջոցառումների մասնակցության՝ 663
(կրկնություններով)

3.1 Ապահովվել է ԵՊՀ ՈՒԽ կանոնադրության 2.1 կետով սահմանված ԵՊՀ ՈՒԽ-ի նպատակներն ու խնդիրները, այն է՝

- Պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
- Ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը,
- Համալսարանի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր,
- Հետևողականորեն մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը,
- Իրազեկել ուսանողներին՝ իրենց իրավունքների ու պարտականությունների մասին,
- Նպաստել իրավագիտակցական մակարդակի բարձրացմանն ու ակտիվ քաղաքացիական կեցվածքի ձևավորմանը,
- Նպաստել ուսանողության համար բարենպաստ միջավայրի

ձևավորմանը և խթանել ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը,

- Աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը

3.2 Ապահովվել է ֆակուլտետի ուսանողների մասնակցությունը ԵՊՀ ՈԻԽ համահամալսարանական ծրագրերին

- «Ինքնակառավարում 2022»
- «Արի մրցենք» միջֆակուլտետային առաջնություն
- «Գևորգ Արշակյանի անվան Գիտելիքի դպրոց»

3.3 Ապահովվել է ֆակուլտետի ուսանողների մասնակցությունը ԵՊՀ ՈԻԽ կազմակերպած

- Ամառային հանգիստ 2021-ին ԵՊՀ Բյուրականի ուսումնաարտադրական բազայում
- Ձմեռային հանգիստ 2022-ին ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում

3.4 Հաշվետու շրջանում համատեղ միջոցառումներ ենք իրականացրել

- Ուրբան կայուն զարգացման հիմնադրամի հետ,
- Բիլ Արմենիա երիտասարդական կազմակերպության հետ,
- Հայաստանի ազգային ազրարային համալսարանի, Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի հետ